

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն քվեարկության և դրան նախորդող օրը նախընտրական ցանկացած քարոզչություն արգելվում է:

Նախորդ համապետական ընտրությունների փորձը ցույց է տալիս, որ զանգվածային լրատվության միջոցներով, հատկապես տպագիր մամուլով (թերթերով), քվեարկության և դրան նախորդող օրը հրապարակվում են նախընտրական քարոզչություն պարունակող նյութեր:

Նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումները բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի անունից դիմում են զանգվածային լրատվության միջոցների, հատկապես տպագիր մամուլի ներկայացուցիչներին՝ կոչ անելով խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջը, այն է՝ Հանրապետության Նախագահի ընտրությունների նախորդ և քվեարկության օրը՝ ս/թ փետրվարի 18-ին և 19-ին, նախընտրական քարոզչություն պարունակող նյութեր չհարապարակել, իսկ հրատարակչություններին՝ զերծ մնալ նման նյութեր հրատարակելուց:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
նախագահ Գ. Ազարյան**